შეფასებისა და გამოცდების
ეროვნული ცენტრი



# Ավագ հատուկ ուսուցչի մասնագիտական ունակությունների թեստ

Հրահանգ

Ձեր առջև է թեստի էլեկտրոնային բուկլետը:

Թեստը ներառում է երեք տեսակի՝ ընտրովի պատասխաններով, համապատասխանության և բաց առաջադրանքներ (ընդհանուր առմամբ՝ 40 առաջադրանք):
Թեստի առավելագույն միավորն է ՝ 54:

Յուրաքանչյուր տեսակի առաջադրանքների բլոկին նախորդում է հրահանգ: Ուշադիր կարդացեք դրանցից յուրաքանչյուրը, լավ ըմբռնեք, թե ինչ  է պահանջվում առաջադրանքը կատարելու համար, որից հետո միայն ընտրեք կամ գրեք պատասխանը:

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու և ետ վերադառնալու համար կարող եք գործածել ստեղնաշարի հետևյալ կոճակները՝

*Որոշ առաջադրանքներ չեն տեղավորվում մեկ էջի վրա: Նման դեպքում երկրորդ էջը գտնելու համար առաջադրանքի համարին ավելանում է լատինական - a տառը:

## Հրահանգ

Ընտրովի պատասխաններով առաջադրանքներին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Առաջադրանքի էությունն ավելի լավ ըմբռնելու համար ուշադրություն դարձրեք հարցի ընդգծված, թավատառ արտահայտություններին:

*Ընտրովի պատասխաններով առաջադրանքները գնահատվում են՝ մեկ միավոր:*


1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 1**

Հատուկ ուսուցիչը տարվա ընթացքում անհատապես աշխատում է հատուկ կրթական կարիքներ ունեցող (ՀԿԿՈւ) աշակերտի հետ: Նա նկատում է, որ չնայած ինտենսիվ փորձերի աշակերտը չունի կարճաժամկետ անհատական նպատակների հետ կապված առաջընթաց:

Նկարագրված իրավիճակում **նախևառաջ**՝

ա) Ուսուցիչը պետք է վերլուծի աշակերտի համար նախանշված նպատակները և ուսուցման մեթոդները: Հնարավոր է դրանք չեն համապատասխանում աշակերտի կարողություններին և կարիքներին:

բ) Ի տարբերություն մյուսների, ՀԿԿՈւ աշակերտին ուսուցիչը պետք է տրամադրի ավելի շատ ժամանակ և շարունակի աշխատել նրա հետ: Հնարավոր է աշակերտի ուսման տեմպն ավելի դանդաղ է, քան նրա համադասարանցիներինը:

գ) Ուսուցիչը պետք է կրճատի նպատակներն ու ակտիվությունները, աշխատի միայն մեկ կամ երկու նպատակների շուրջ միևնույն ակտիվություններով: Միաժամանակ մի քանի նպատակի վրա աշխատելը կարող է շփոթեցնել աշակերտին:

դ) Ուսուցիչը պետք է մշակի կառուցքավորված մոտեցում և կարգապահություն՝ կոչ անելով աշակերտին գործադրել ավելի շատ ջանքեր: Հնարավոր է աշակերտը չունի սովորելու ձգտում և նրան հարկավոր է մոտիվացնել:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 2**

ՀԿԿՈւ աշակերտը դժվարանում է ճիշտ ըմբռնել սոցիալական ազդանշանները, ինչից ելնելով էլ շրջապատի հետ շփման խնդիրներ է ունենում:

Թվարկվածներից **ամենից շատ** ո՞ր ակտիվությամբ կարող է օգնել ուսուցիչն աշակերտին խնդիրը հաղթահարելու հարցում:

ա) Ուսուցիչն աշակերտներին խաղ է առաջարկում. Մարմնի լեզվի և ձայնի տոնայնության փոփոխությամբ աշակերտները պետք է արտահայտեն տարբեր հույզեր, մինչդեռ մյուսները պետք է կռահեն մտապահված հույզը:

բ) Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է խմբային ակտիվություն. Աշակերտներին բաժանում են սոցիալական տարբեր խնդիրներ արտացոլող տեքստեր: Նրանք պետք է դատողություն անեն իրավիճակների շուրջ և գնահատեն կերպարի վարքի ճշգրտությունը:

գ) Ուսուցիչն աշակերտներին տալիս է առաջադրանք. Աշակերտները պետք է դատողություն անեն, թե որ սոցիալական իրավիճակում ինչ հույզեր են առաջանում՝ երբ են զայրանում և երբ են ուրախանում:

დ) Ուսուցիչը շնորհանդես է ներկայացնում. Նա բացատրում է աշակերտներին, ինչ է իրենից ներկայացնում սոցիալական ազդանշանը, նրանց հաղորդում է հարցին առնչվող տեսական գիտելիքներ և բերում է համապատասխան օրինակներ:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 3**

ՀԿԿՈւ աշակերտի ձեռքը դողում է, ինչը խանգարում է նրան կատարել գրավոր աշխատանքները:

Թվարկվածներից Ազգային ուսումնական պլանի (ԱՈւՊ) ակոմոդացիայի ո՞ր ձևն է **ամենաարդյունավետը** տվյալ իրավիճակում:

ա) Ուսուցիչն աշակերտին հանձնարարում է տրված տեքստից տետրի մեջ շատ անգամ արտագրել միևնույն բառերը:

բ) Գրելու փոխարեն ուսուցիչն աշակերտին խնդրում է ներկել առաջադրանքի համապատասխան բովանդակությունն ունեցող նկարները:

գ) Ուսուցիչը խնդրում է աշակերտին գրչով ընդգծել նախապես կետերով գրված բառերի եզրագծերը:

դ) Առաջադրանքները գրելու փոխարեն ուսուցիչն աշակերտին խնդրում է պատրաստել դրանք ձայնագրության տեսքով:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 4**

Դիսլեքսիայով տառապող աշակերտը մաթեմատիկայի դասին չի կարողանում հասկանալ իր ընթերցած խնդրի պայմանը: Ուսուցչի նպատակն է օգնել աշակերտին խնդրի պայմանն ինքնուրույն ըմբռնելու հարցում:

Թվարկվածներից ուսուցչի ո՞ր ակտիվությունն **ամենից շատ** կօգնի աշակերտին ընթերցածն ըմբռնելու հարցում:

ա) Ուսուցիչն աշակերտին խնդրում է մի քանի անգամ կարդալ խնդրի պայմանը և լրացուցիչ ժամանակ է տրամադրում այն ըմբռնելու համար:

բ) Ուսուցիչն աշակերտի համար խնդրի պայմանը գրում է գրատախտակին, այնուհետև թելադրում մաթեմատիկական գործողությունները:

գ) Ուսուցիչը գրատախտակի մոտ է կանչում ՀԿԿՈւ աշակերտին և խնդրում է բարձրաձայն կարդալ խնդրի պայմանը, մինչդեռ մյուս աշակերտներին խնդրում է տրամադրել հետադարձ կապ:

դ) Ուսուցիչն աշակերտին խնդրում է կարդալ խնդրի այնպիսի տեքստ, որտեղ տրված են տեսողական գծապատկերներ և թավատառ են գրված հանգուցային բառերը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 5**

Դասարանում սովորում է խոսքի զարգացման խանգարումներ ունեցող աշակերտ, որն ունի հնչարտաբերության խնդիր: Համադասարանցիներից ոմանք ծաղրելու նպատակով բառերը նրա նման են արտաբերում, ինչից ելնելով էլ նա խուսափում է այդ աշակերտների հետ շփումից և չի ցանկանում հաճախել դպրոց:

Թվարկվածներից **ամենից շատ** ո՞ր ակտիվությամբ ուսուցիչը կկարողանա կարգավորել աշակերտների միջև հարաբերությունները:

ա) Ուսուցիչն աշակերտներին խնդրում է գրել իրենց համար կարևոր կյանքի պատմություններ, ապա ընթերցել միմյանց գրավորները և խոսել առաջացած հույզերի մասին:

բ) Ուսուցիչն իր դասղեկի ժամը տրամադրում է բուլինգի թեմային և զգուշացնում աշակերտներին, որ եթե նրանք չդադարեցնեն նվաստացուցիչ արարքները, ապա այդ մասին կտեղեկացնի նրանց ծնողներին:

գ) Ուսուցիչը դասարանում քննարկում է առկա իրավիճակը և համադասարանցուն ծաղրող աշակերտներին խնդրում է բացատրել իրենց արարքն ու ներողություն խնդրել:

դ) Ուսուցիչը զրուցում է խոսքի խանգարում ունեցող աշակերտի հետ, խնդրում է նրան ուշադրություն չդարձնել համադասարանցիների ծաղրանքներին և բացատրում է, որ այդկերպ նա կկարողանա հաղթահարել նրանց:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

## Առաջադրանք 6

* Առաջադրանքի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Ուսուցիչը որոշել է գնահատել ՀԿԿՈւ աշակերտի մտածողությունը, ինչի համար օգտագործել է տարբեր վարժություններ:
Թվարկվածներից ո՞ր վարժությունն օգտագործելու դեպքում ուսուցչին **չի հաջողվի** գնահատել աշակերտի մտածողությունը:

ա) «Համապատասխանեցրո՛ւ իրար»




բ) «Համապատասխանեցրո՛ւ իրար»



1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

գ) «Համապատասխանեցրո՛ւ իրար»



ը) «Համապատասխանեցրո՛ւ իրար»



1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 7**

Թվարկվածներից ո՞ր պնդումն է ճիշտ արտահայտում ներառական կրթության էությունը:

ա) ՀԿԿՈւ աշակերտները տարբեր ունակություններ զարգացնելու համար հաճախ օգտվում են հատուկ ուսուցչի, անձնական օգնականի և/կամ հոգեբանի ծառայություններից ռեսուրս սենյակում:

բ) Դասապրոցեսի ընթացքում, երբ դասարանի աշակերտները որևէ առաջադրանք են կատարում, առարկան դասավանդող ուսուցիչները ՀԿԿՈւ աշակերտի հետ զուգահեռաբար տարբերվող ակտիվությունների շուրջ են աշխատում:

գ) Երբեմն ՀԿԿՈւ աշակերտներն օգտվում են հաճախումների անհատական ժամանակացույցից, դասարան են մտնում իրենց համար նախապես սահմանված ժամանակի ընթացքում և մնում այնտեղ միայն կարճ ժամանակով:

դ) Ուսուցիչները դասարանում կիրառում են համագործակցության ռազմավարություններ և համադասարանցիների հետ միասին ՀԿԿՈւ աշակերտը ևս մասնակցում է տարբեր ակտիվություններին, որտեղ նրանցից յուրաքանչյուրը համապատասխան աջակցություն է ստանում:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 8**

ՀԿԿՈւ աշակերտն ունի տեսողական խտրականության խնդիր:

Թվարկվածներից ո՞ր սխալը կարող է թույլ տալ աշակերտը կարդալու ընթացքում:

ա) Աշակերտը կարող է շփոթել նմանատիպ տառերը:

բ) Աշակերտը հնարավոր է չկարողանա որոշել բառի բաղկացուցիչ հնչյունների հաջորդականությունը:

գ) Աշակերտը հնարավոր է դժվարանա որպես մեկ բառ ամբողջացնել կարդացած տառերը:

դ) Աշակերտը հնարավոր է չկարողանա անվանել բառի մեջ պարունակվող տառերի քանակը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 9**

ՀԿԿՈւ անձի կարգավիճակ ստանալու համար աշակերտը պետք է ունենա՝

ա) Բժշկական ախտորոշում, որը բացասական ազդեցություն է գործում աշակերտի առողջական վիճակի վրա և հանգեցնում ուսման արտահայտված բարդությունների:

բ) Հոգեկան առողջության հետ կապված լուրջ խնդիրներ, ինչն ազդում է աշակերտի ուսման մակարդակի վրա և բացասական կերպով անդրադառնում ակադեմիական առաջադիմության վրա:

գ) Ուսման և/կամ ուսումնական միջավայրի հասանելիության հետ կապված լուրջ խնդիրներ, ինչի պատճառով ուսման ընթացքում աշակերտին պահանջվում է հավելյալ օգնություն:

դ) Մտավոր խանգարում և դրան ուղեկցող որևէ այլ վիճակ, ինչը աշակերտին հանգեցնում է ուսման հետ կապված բարդությունների:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 10**

Ուսուցիչը նպատակ է դրել օգնել տեսողությունից զուրկ աշակերտին «Մոլորակ», «Աստղեր», «Լուսին» հասկացություններն ըմբռնելու հարցում:

Թվարկվածներից ուսուցչի ո՞ր գործողությունը **ամենից շատ** կօգնի աշակերտին նախանշված նպատակին հասնելու գործում:

ա) Ուսուցիչը մանրամասն բացատրում է աշակերտին, որ մարդիկ ապրում են Երկիր մոլորակի վրա, տիեզերքում կան նաև այլ մոլորակներ, ցերեկը շողում է Արեգակը, իսկ Լուսինը երկնային մարմին է, որը պտտվում է Երկրի շուրջը և լուսավորում գիշերը:

բ) Ուսուցիչը տեսողությունից զուրկ աշակերտին առաջարկում է մոլորակների, աստղերի և Լուսնի մասին Բրայլի գրերով տպված տեքստ, որտեղ դրանցից յուրաքանչյուրի մասին տեղեկություններ են տրված:

գ) Ուսուցիչն աշակերտին տարբեր ռեսուրսներ է առաջարկում և խնդրում, որ իր պատկերացրածի համաձայն պատրաստի մոլորակի, աստղերի և լուսնի պատկերներ:

դ) Ուսուցիչն աշակերտին ներկայացնում է Արեգակնային համակարգի, աստղերի և Լուսնի ռելիեֆի շոշափողական (տակտիլ) մոդելներ, զուգահեռաբար անվանելով դրանք: Սրա հետ մեկտեղ լսել է տալիս յուրաքանչյուր հասկացության հետ առնչացված ձայներ, օրինակ՝ մոլորակների պտույտի և այլն:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 11**

Թվարկվածներից ո՞ր ակտիվության կատարումն է աշակերտներից պահանջում աշխատանքային հիշողություն:

ա) Աշակերտն ունկնդրած թվանշանների շարքը կրկնում է հակառակ հաջորդականությամբ:

բ) Աշակերտը մտաբերում է դպրոցից դեպի տուն և հակառակը՝ տնից դեպի դպրոց տանող ճանապարհը:

գ) Աշակերտը դասի սկզբին ունկնդրած տեքստը մտաբերում է դասի ավարտին:

դ) Աշակերտը տուն վերադառնալուց հետո մտաբերում է, թե ինչ է հանձնարարել ուսուցիչը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 12**

Հատուկ ուսուցիչը մտադրվել է աշխատել ՀԿԿՈւ աշակերտի ֆունկցիոնալ ունակությունների վրա:

Թվարկվածներից ո՞ր ակտիվությունն **ամենից շատ** կարող է օգնել աշակերտին ֆունկցիոնալ ունակությունների զարգացման գործում:

ա) Նկարագրել սյուժետային քարտերը և այնուհետև ներկել դրանք:

բ) Նկարի վրա ճանաչել առավոտյան ընթացակարգերի համար նախատեսված իրերը:

գ) Պլաստիլինով ծեփել տորթ և խաղալիքներով զգել սեղան:

դ) Պահպանելով եզրագծերը թղթից կտրատել միրգ և բանջարեղեն, այնուհետև խմբավորել դրանք:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 13**

ՀԿԿՈւ աշակերտն ունի ուսման հետ կապված խնդիրներ: Դրանք հաղթահարելու գործընթացը սկսվում է առաջնային կառավարման պլանի մշակմամբ:

Ուսման հետ կապված խնդրի առաջնային կառավարման պլանի նպատակն է.

ա) Ուսումնական նպատակները որոշել աշակերտի ծնողի ընդգրկվածությամբ:

բ) Բացահայտել աշակերտի կարիքները և ստեղծել ուսումնական համապատասխան միջավայր:

գ) Աշակերտի կարողությունների նախատեսմամբ մշակել Անհատական ուսումնական պլան:

դ) Աշակերտի ակադեմիական առաջադիմության համապատասխան նշանակել լրացուցիչ դասեր:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 14**

ՀԿԿՈւ աշակերտը դժվարանում է կատարել երկար առաջադրանքներ, ինչի պատճառով էլ դադարեցնում է աշխատանքը և անցնում նոր առաջադրանքի կատարմանը:

Թվարկվածներից ո՞ր ակտիվությամբ/ակտիվություններով կարող է օգնել ուսուցիչը ՀԿԿՈւ աշակերտին խնդիրը հաղթահարելու հարցում:

I. Ուսուցիչը աշակերտի համար պետք է կազմի առաջադրանքի տեսողական պլան և այդ պլանի յուրաքանչյուր քայլը հաղթահարելուց հետո տրամադրի ընդմիջում:

II. Ուսուցիչը խնդրում է աշակերտին նորից արտագրել չավարտված առաջադրանքները և ուշադրություն է դարձնում, որ ավարտին հասցնի դրանցից յուրաքանչյուրը:

III. Ուսուցիչն ափսոսանք է հայտնում չավարտված առաջադրանքների պատճառով և խնդրում է աշակերտին ավելի շատ փութաջանություն դրսևորել:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 15**

Տիպիկ զարգացում ունեցող աշակերտի ծնողը հատուկ ուսուցչին հայտնել է իր դժգոհությունն առ այն, որ իր երեխայի դասարանում սովորում է դժվար վարք ունեցող աշակերտ:

Թվարկվածներից ո՞ր գործողությամբ կկարողանա ուսուցիչը բարձրացնել ծնողի իրազեկվածությունը:

ա) Հատուկ ուսուցիչը պետք է զրուցի ծնողի հետ յուրաքանչյուր աշակերտի սոցիալ-հուզական զարգացման համար ներառական կրթության կարևորության մասին:

բ) Հատուկ ուսուցիչը պետք է բացատրի ծնողին, որ համաձայն օրենքի բոլոր աշակերտներն ունեն սովորելու իրավունք և այդ գործընթացում որևէ բան փոփոխել չի թույլատրվում:

գ) Հատուկ ուսուցիչը պետք է հայտնի իր դժգոհությունը ծնողի ոչ հանդուրժողական վերաբերմունքի համար և հիշեցնի նրան ծնողի պատասխանատվությունները:

դ) Հատուկ ուսուցիչը պետք է բացատրի ծնողին աշակերտի վիճակը և խնդրի նրբազգացություն և կարեկցանք ցուցաբերել նրա նկատմամբ:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

## Հրահանգ

Համապատասխանության առաջադրանքները ներկայացված են աղյուսակի տեսքով: Աղյուսակը բաղկացած է երկու սյունակից: Սյունակներից մեկում տրված է պայմանը, մյուսում՝ ենթադրական պատասխանները: Սյունակներում տրված տեղեկությունները համապատասխանեցնեք իրար և պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Անպայման կարդացեք պատասխանի բոլոր տարբերակները: Հաշվի առեք, որ դրանցից որևէ մեկը կարող է համապատասխանել երկու պայմանի, կամ չհամապատասխանել ոչ մեկի:

Համապատասխանության առաջադրանքները գնահատվում են՝ մեկ միավոր:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 16**

A սյունակում ներկայացված են նպատակները, մինչդեռ B սյունակում՝ ունակությունները, որոնք առաջատար դեր են կատարում տրված նպատակին հասնելու համար: Համապատասխանեցրեք դրանք իրար:

| Նպատակ (A) | Ունակություն (B) |
|---|---|
| I. Աշակերտը պետք է կարողանա մինչև առաջադրանքն ավարտելը պահպանել հրահանգը և հետևել դրան: | ա) Ուշադրություն<br>բ) Մտածողություն |
| II. Աշակերտը պետք է կարողանա խմբավորել օբյեկտները՝ միաժամանակ հաշվի առնելով երկու նշանները: | |
| III. Աշակերտը պետք է կարողանա հաջորդականությամբ դասավորել առօրյա իրադարձությունների հետ կապված սյուժետային քարտերը: | |

*** Համապատասխանությունները գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Գրեք պարզ և հստակ:**

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 17**

* Առաջադրանքի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Աշակերտի վարքի սրված բարդության պատճառով դպրոցում ստեղծված ճգնաժամային իրավիճակներից խուսափելու նպատակով տարբեր ռազմավարություններ են կիրառում:

B սյունակում ներկայացված են ճգնաժամային իրավիճակներից խուսափելու ռազմավարություններ, մինչդեռ A սյունակում՝ ուսուցչի գործողությունները: Համապատասխանեցրեք դրանք իրար:

| Ուսուցչի գործողություն (A) | Ռազմավարություն (B) |
|---|---|
| I. Աշակերտներն իրար վրա թղթե գնդակներ են նետում: Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը շեղում է հետաքրքիր ակտիվությամբ՝ այդկերպ դադարեցնելով վարքը: | ա) Դժվար վարքի կանխարգելում |
| II. Ուսուցիչը գիտի, որ երկու աշակերտի սիստեմատիկ կերպով իրար կողքի նստելը հանգեցնում է կոնֆլիկտի: Դասը սկսվելուց անմիջապես հետո նա այդ աշակերտներին իրարից որոշ հեռավորության վրա է նստեցնում: | բ) Դժվար վարքի ապաէսկալացիա |

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

| | |
|---|---|
| III. Ուսուցիչը խրախուսում է աշակերտին, որը սպորտի դասին խաղում պարտվելու պատճառով նյարդայնացած է և համադասարանցիներին հեգնորեն է դիմում: Խրախուսելուց հետո աշակերտը հանգստանում և դադարեցնում է խնդրահարույց վարքագիծը: | |

***Համապատասխանությունները գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Գրեք պարզ և հստակ:**

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 18**

* Առաջադրանքի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Հաղորդակցության հետ կապված խնդիրների կարող են հանգեցնել ինչպես աուտիզմի սպեկտրի խանգարումներն, այնպես էլ լեզվի և խոսքի զարգացման խանգարումները:

B սյունակում ներկայացված են վիճակները, մինչդեռ A սյունակում՝ այդ վիճակներին բնորոշ ախտանշանները: Համապատասխանեցրեք դրանք իրար:

| Ախտանշան (A) | Վիճակ (B) |
|---|---|
| I. Երեխան չի ներգրավվում ուրիշների նախաձեռնած հարաբերություններում և իրեն շրջապատող մարդկանց հետ նրա հաղորդակցությունը ռեցիպրոկ չէ: | ա) Աուտիզմի սպեկտրի խանգարումներ |
| II. Ուրիշների հետ հաղորդակցվելիս և/կամ իր կարիքներն արտահայտելիս երեխան հաճախ կրկնում է համատեքստին չհամապատասխանող միևնույն արտահայտությունները: | բ) Լեզվի և խոսքի զարգացման խանգարումներ |

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

| | | |
|---|---|---|
| III. | Երեխան դժվարությամբ է հասկանում ուրիշի ասվածը և իր հասցեին ուղղված խոսքը փորձում է ըմբռնել հիմնվելով  հաղորդակցության ոչ վերբալ նշանների վրա: | |

***Համապատասխանությունները գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Գրեք պարզ և հստակ:***

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

## Հրահանգ

Բաց առաջադրանքը պահանջում է տրված հարցի վերաբերյալ փաստարկված դատողություն: Ուշադիր կարդացեք առաջադրանքի պայմանը և հարցը: Հաշվի առեք, որ ձեր պատասխանը պետք է լինի կոնկրետ և համապատասխանի հարցին:

Պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով հատուկ հատկացված տեղում գրեք ձեր պատասխանը՝ դուրս չգալով առաջադրանքի համար հատկացված տարածքից:

*Յուրաքանչյուր բաց առաջադրանքի երկայնքով նշված է առավելագույն միավորը:*

*Հաշվի առեք՝ բաց առաջադրանքի պատասխանի մեջ խտրական տերմին գործածելու դեպքում կկորցնեք մեկ միավոր:*

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

Առաջադրանք 19

*Առավելագույն միավոր՝ 3*



*«...Տիկին Հանը տղային կանգնեցրեց իր կողքը և դիմեց մեզ.*

*- Երիտասարդներ, սա Ահմետն է, այսօրվանից մեր դասարանում է սովորելու: Նախքան դասը սկսելն ուզում եմ ողջունեք իմ նոր օգնականին: Տիկին Հեմսն այսօրվանից օգնելու է Ահմետին:*

*Տիկին Հանը հանգիստ բացատրեց, որ նորեկ տղան որոշ ժամանակ առանձին պետք է լինի:*

*Ողջ օրվա ընթացքում թաքուն ուսումնասիրում էի նորեկ տղային: Նկատեցի, որ ոչ միայն ես, այլև ամբողջ դասարանն էր այդպես վարվում: Ջենին պատմում էր, որ նորեկը բոլոր դասամիջոցները տնօրենի սենյակում է անցկացնում: Անշուշտ, նախկին դպրոցում ինչ-որ վատ բան է արել և հիմա մեզ հետ միասին նրան բակ թողնելը շատ վտանգավոր է:*

*- Այս «առանձին»-ը ի՞նչ է նշանակում, - հարցրեց Ջոզին:*

*Մայքլը ենթադրեց, որ երևի նորեկ տղային առանձին խնամք է հարկավոր, ինչպես հիվանդներին հիվանդանոցում»:*

*Օնջալի Ռաուֆ, ըստ՝ «Մեր դասարանի վերջին նստարանի տղան» գրքի: Բակուր Սուլակաուրի հրատարակչություն, 2021 թ.*

– Նկարագրե՛ք ռազմավարությունը, որը կնպաստի աշակերտների շրջանում հատուկ կարիքներ ունեցող մարդկանց նկատմամբ խարանի նվազեցմանն ու վերացմանը:

– Հիմնավորե՛ք ձեր նկարագրած ռազմավարության արդյունավետությունը:

***Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:**

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 20**

*Առավելագույն միավոր՝ 3*

ՀԿԿՈւ աշակերտին որակավորված աջակցություն հնարավոր է ցուցաբերել այնպիսի միջավայրում, որը առավելագույնս հարմարեցված է նրա կարիքներին և ապահովում է աշակերտի ամբողջական ընդգրկվածությունը: Ուստի կարևոր է, որ հատուկ ուսուցիչն անընդհատ հոգա իր մասնագիտական զարգացման և կատարելագործման մասին:

Հատուկ ուսուցչի մասնագիտական ինքնազարգացման համար, նախևառաջ, անհրաժեշտ է վերլուծել և գնահատել սեփական գործունեությունը:

- Նկարագրե՛ք հատուկ ուսուցչի ինքնագնահատման մեթոդներից մեկը:
- Բացատրեք, թե ինչպես է հնարավոր կիրառել այն մասնագիտական ինքնազարգացման համար:

***Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:**

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 21**

*Առավելագույն միավոր՝ 3*

*Դասարանում կա Տուրետի համախտանիշով տառապող աշակերտ: Դասարանում նրան հաճախ ծաղրում են համախտանիշին բնորոշ շարժողական և ձայնային տիկերի պատճառով, ինչը խիստ մտահոգում է այդ աշակերտի ծնողին:*

*Ծանոթացեք երկխոսությանը.*

Ծնող. *Ինձ համար խիստ շատ ծանր է պատկերացնել, որ իմ երեխայի խնդրից ելնելով դասարանում հաճախ անհարմար իրավիճակ է ստեղծվում: Կարծում եմ, այդ իրավիճակը երեխայիս մոտ էմոցիոնալ անհարմարություն է առաջացնում:*

Ուսուցիչ. *Այո, ես լավ գիտեմ, թե ինչ նկատի ունեք, հասկանում եմ Ձեզ, Ձեր երեխայի մասին գիտեմ ամեն ինչ և նույնիսկ խորհուրդներ եմ նախապատրաստել, իսկ աշակերտների հետ անպայման կզրուցեմ:*

- Մտորե՛ք, թե ինչ սխալ է թույլ տվել ուսուցիչը ծնողի հետ հաղորդակցվելիս ակտիվ ունկնդրման տեսանկյունից:
- Բացատրեք, ինչի՞ կարող է հանգեցնել ծնողի հետ նման հաղորդակցությունը:

***Պատասխան գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:***

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

# Հրահանգ

Ընտրովի պատասխաններով առաջադրանքներին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Առաջադրանքի էությունն ավելի լավ ըմբռնելու համար ուշադրություն դարձրեք հարցի ընդգծված, թավատառ արտահայտություններին:

*Ընտրովի պատասխաններով առաջադրանքները գնահատվում են՝ մեկ միավոր:*

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 22**

Հատուկ ուսուցիչը որոշել է գնահատել տեսողության խանգարումներ ունեցող աշակերտի ֆունկցիոնալ տեսողությունը:

Ֆունկցիոնալ տեսողության գնահատման նպատակն է.

ա) Որոշել, թե ինչպես է աշակերտը կիրառում տեսողությունը տարբեր ակտիվություններ կատարելիս և ինչ բնական ռազմավարություններ ունի նա դժվարությունները հաղթահարելու համար:

բ) Որոշել, թե ինչպիսին է աշակերտի տեսողության խանգարման աստիճանը և ինչ ազդեցություն է գործում այն աշակերտի ինքնագնահատման և սոցիալական հարաբերությունների վրա:

գ) Որոշել, թե տեսողության խանգարման որ տեսակն ունի աշակերտը և համապատասխանաբար ընտրել բուժման լավագույն եղանակը:

դ) Որոշել, թե ելնելով խանգարման աստիճանից որքանով է հնարավոր ամբողջությամբ կամ մասնակիորեն վերականգնել աշակերտի տեսողության ֆունկցիան:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 23**

Աուտիզմով տառապող ՀԿԿՈւ աշակերտը դժվարանում է հասկանալ ուրիշի ասածը: Նա չի պատասխանում ուսուցչի հղած հարցերին և չի կատարում նրա տված հրահանգները:

Թվարկվածներից ուսուցչի ո՞ր գործողությունն **ամենից շատ** կօգնի աշակերտին հրահանգներն ըմբռնելու հարցում:

ա) Ուսուցիչը հրահանգներն արտահայտում է հստակ հնչարտաբերությամբ (արտիկուլյացիա) և խնդրում է աշակերտին ուշադրություն դարձնել իր շուրթերի շարժմանը՝ ուսուցչի ասածն առավել հեշտությամբ կռահելու նպատակով:

բ) Ուսուցիչը հրահանգները համապատասխանեցնում է տեսողական կոնկրետ պատկերների հետ և յուրաքանչյուր հրահանգը տալուց անմիջապես հետո ցույց է տալիս դրա հետ իմաստային առումով կապված քարտը:

գ) Ուսուցիչն աշակերտին առաջարկում է կրկնել հրահանգները և խնդրում, որ դրանցից յուրաքանչյուրը երևակայության մեջ ասոցացնի որևէ տեսողական պատկերի հետ՝ այն հեշտությամբ մտաբերելու նպատակով:

դ) Ուսուցիչը դասարանի աշակերտներին տված հրահանգը մի քանի անգամ անհատապես ընթերցում է ՀԿԿՈւ աշակերտի համար և յուրաքանչյուր անգամ կրկնելուց հետո ստուգում է, հասկացել է արդյոք աշակերտը իր ասածի իմաստը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 24**

Թվարկվածներից ո՞ր սկզբունքի/սկզբունքների վրա պետք է հիմնվի ուսուցիչը մտավոր զարգացման խանգարումներ ունեցող աշակերտի համար ուսումնական ռեսուրս ընտրելիս:

I. Ռեսուրսը պետք է նպաստի աշակերտի տարբեր զգայական ուղիների խթանմանը, թեև խթանումը չպետք է լինի չափազացված:
II. Ռեսուրսը չպետք է համապատասխանի առարկայի յուրահատկությանը, սակայն անպայման պետք է հարմարեցված լինի աշակերտի կարողություններին:
III. Ռեսուրսը պետք է լինի պարզ և հեշտ կիրառելի, որպեսզի աշակերտի մոտ չառաջանան դրա հետ կապված լրացուցիչ հարցեր:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 25**

Թելադրություն գրելիս աշակերտը սխալներ է գործում: Օրինակ՝ եթե թելադրում են «շիշ», գրում է ՝«սիս» և չի հասկանում, թե ինչու են նրան ասում, որ բառը սխալ է գրել:

Թվարկվածներից **ամենից շատ** ո՞ր ունակության հետ կապված բարդությունն է հանգեցնում նշված խնդրին:

ա) Աչք-ձեռքի կոորդինացիայի

բ) Աուդիալ (լսողական) խտրականության

գ) Վիզուալ (տեսողական) խտրականության

դ) Լսողական ուշադրության

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 26**

Կա տեսակետ, որ աուտիզմի սպեկտրի խանգարումն ախտորոշելու համար անհրաժեշտ է դիֆերենցիալ ախտորոշաբանություն:

Տվյալ տեսակետը՝

ա) **Ճիշտ է,** քանի որ դիֆերենցիալ ախտորոշաբանությունը մասնագետին ընձեռում է աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող անձի ախտանշանների բարդության աստիճանը կարճ ժամանակում արդյունավետորեն գնահատելու և ստույգ կերպով ախտորոշելու հնարավորություն:

բ) **Ճիշտ չէ,** քանի որ դիֆերենցիալ ախտորոշաբանությունը անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ երեխան չի կարողանում խոսել, մինչդեռ աուտիզմի սպեկտրի խանգարման ժամանակ նա կարող է ընդհանրապես չունենալ լեզվի և խոսքի զարգացման խնդիրներ:

գ) **Ճիշտ է,** քանի որ աուտիզմի սպեկտրին բնորոշ ախտանիշներ կարող են նկատվել նաև այլ վիճակների դեպքում և մասնագետը պետք է կարողանա տարանջատել դրանք աուտիզմից:

դ) **Ճիշտ չէ,** քանի որ սովորաբար ինչպես վարքի, այնպես էլ ունակությունների զարգացման տեսանկյունից աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող բոլոր երեխաներին բնորոշ են միևնույն ախտանիշները: Ուստի, դիֆերենցիալ ախտորոշաբանության կարիք չկա:

4 1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 27**

Մանկապարտեզից դպրոց աշակերտի տրանզիցիան (փոխարինում) երեխայի կյանքում կարևոր գործընթացներից է, որը ճիշտ է պետք ծրագրել: Տրանզիցիան բաղկացած է մի քանի փուլերից:

Թվարկվածներից ծնողի ո՞ր ակտիվությունն է արտահայտում տրանզիցիայի գործընթացի առաջին, նախապատրաստական փուլը:

ա) Ծնողն ուսումնական գործընթացը սկսվելու առաջին իսկ օրը երեխային տանում է դպրոց և թողնում համադասարանցիների միջավայրում՝ դասղեկի հսկողության ներքո:

բ) Ուսումնական գործընթացը սկսվելուց մի քանի ամիս առաջ ծնողը երեխային պարբերաբար դպրոց է տանում, ծանոթացնում միջավայրի և դասղեկի հետ:

գ) Ուսումնական գործընթացը սկսվելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում ծնողը երեխային տանում է դպրոց և թողնում հատուկ ուսուցչի մոտ՝ ռեսուրս սենյակում աշխատելու համար:

դ) Ուսումնական գործընթացը սկսվելուց հետո առաջին ամսվա ընթացքում ծնողն ընտրում է, թե որ դասին տանի իր երեխային և մինչև ուսումնական տարվա ավարտը փուլ առ փուլ ավելացնում հաճախումների քանակը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 28**

Տարրական աստիճանի աշակերտն ունի ADHD համախտանիշ: Նա դժվարանում է նույն տեղում մնալ մինչև դասի ավարտը: Մինչդեռ հատուկ ուսուցիչը գտնում է, որ դժվար վարք ունեցող աշակերտն ուղղակի խուսափում է սովորելուց, քանի որ ինչպես ծնողն է ասում, երեխան տանն այլ կերպ է իրեն պահում:

Ուսուցչի այդ տեսակետը՝

ա) **Ճիշտ է,** քանի որ եթե աշակերտն ունի ADHD համախտանիշ, ապա ազատ տարածքում նրա դժվար վարքն ավելի շատ է դրսևորվում, քան դպրոցի միջավայրում:

բ) **Ճիշտ չէ,** քանի որ ADHD համախտանիշն ազդում է կյանքի բոլոր ոլորտների վրա, թեև տարբեր իրավիճակներում այն տարբեր կերպ է դրսևորվում:

գ) **Ճիշտ է,** քանի որ եթե ADHD համախտանիշ ունեցող աշակերտը տանը կարող է դրսևորել ցանկալի վարք, ապա մյուս իրավիճակներում ևս կկարողանա վերահսկել իր վարքը:

դ) **Ճիշտ չէ,** քանի որ այս վարքը պայմանավորված է ոչ թե ADHD համախտանիշով, այլ ավելի շատ կապված է տարիքային առանձնահատկությունների հետ:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 29**

ՀԿԿՈւ աշակերտը լավ է ըմբռնում մաթեմատիկայի դասին բացատրված նյութը և հեշտությամբ մտապահում է այն, թեև շատ շուտ մոռանում է սովորածը:

**Ամենից շատ** ո՞ր ակտիվությամբ կարող է օգնել ուսուցիչն աշակերտին սովորած նյութը երկարաժամկետ մտապահելու հարցում:

ա) Ուսուցիչը աշակերտներին պետք է խնդրի, որ բացատրեն միմյանց նոր նյութը կյանքի օրինակների հիման վրա:

բ) Ուսուցիչն աշակերտին պետք է հանձնարարի անգիր սովորել մաթեմատիկական գործողությունների կատարման կարգը:

գ) Ուսուցիչը գրատախտակի վրա պետք է գրի օրինակներ և խնդրի աշակերտներին կրկնել դասագրքի համապատասխան պարագրաֆը:

դ) Ուսուցիչն աշակերտի համար պետք է նշանակի անհատական դաս և վերստին բացատրի նյութը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20

21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 30**

ՀԿԿՈւ աշակերտն ունի զգայական ինտեգրման խանգարում: Դասի ընթացքում նա սիստեմատիկ կերպով ճոճվում է աթոռի վրա՝ դրանով իսկ գրավելով համադասարանցիների ուշադրությունը: Երբ աշակերտը սկսում է ճոճվել աթոռի վրա, ուսուցիչը խնդրում է նրան դադարել և ընդգրկվել ուսումնական պրոցեսին:

Ուսուցչի գործողությունը.

ա) **Ճիշտ է,** քանի որ դասարանում բոլոր աշակերտները պետք է պահպանեն վարքի կանոնները: ՀԿԿՈւ աշակերտը ևս պետք է ենթարկվի կանոններին, որպեսզի համադասարանցիները չընդօրինակեն և չկրկնեն նրա վարքը:

բ) **Ճիշտ չէ,** քանի որ խնդրահարույց վարքով ամեն անգամ ուսուցչի ուշադրության գրավումը ՀԿԿՈւ աշակերտին ընձեռում է ուսումնական պրոցեսը խոչընդոտելու և դասը խափանելու հնարավորություն:

գ) **Ճիշտ է,** քանի որ խնդրահարույց վարքի վրա ուշադրությունը կենտրոնացնելով աշակերտը դիտարկում է իր պահվածքը, առավել մեծ պատասխանատվությամբ է հետևում վարքին և նրա մոտ ձևավորվում է ինքնակարգավորման հմտություն:

դ) **Ճիշտ չէ,** քանի որ աշակերտին այդ շարժումը կարող է օգնել կենտրոնանալու հարցում, իսկ շարժումը դադարեցնելու պահանջի արդյունքում առաջացած տագնապը կխանգարի նրան ընդգրկվել դասին:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 31**

Հատուկ ուսուցիչը նպատակ է դրել օգնել ՀԿԿՈւ աշակերտին խոսքի հնչութային (ֆոնեմա) վերլուծության և համադրելու (սինթեզ) ունակության ձևավորման հարցում:

Թվարկվածներից ուսուցչի ո՞ր ակտիվությունը կնպաստի աշակերտին խոսքի հնչութային վերլուծության և համադրելու ունակության զարգացմանը:

ա) Ուսուցիչն արտասանում է որևէ բառ, խնդրում է աշակերտին գտնել այն տեքստում և ընդգծել մարկերով:

բ) Ուսուցիչն աշակերտի համար վանկատելով կարդում է բառը և խնդրում է կազմել այն շարժական այբուբենի միջոցով:

գ) Ուսուցիչն աշակերտին խնդրում է ընթերցել քարտի վրա գրված բառերը և թվարկել դրանք նույն հաջորդականությամբ:

դ) Ուսուցիչն աշակերտի համար ընթերցում է նախադասություն և խնդրում նրան կազմել նոր նախադասություն նույն բառերի կիրառմամբ:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 32**

* Առաջադրանքի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

ՀԿԿՈւ աշակերտի ծնողը գտնում է, որ իր երեխայի ուսման արդյունքները բարելավվել են և պահանջում է չեղարկել ՀԿԿՈւ անձի կարգավիճակը:

Թվարկվածներից ո՞րն է ՀԿԿՈւ անձի կարգավիճակը չեղարկելու ճիշտ ընթացակարգը:

ա) Ծնողն իր երեխայի ախտորոշումը վերանայելու համար կարող է դիմել վերականգնողական ցանկացած կենտրոն: Կենտրոնի մասնագետի կողմից աշակերտի ախտորոշումը չեղարկելու դեպքում ծնողն այդ գնահատումը պետք է ներկայացնի դպրոցին, ինչի հիման վրա էլ դպրոցի տնօրինությունը պարտավոր կլինի չեղարկել աշակերտի ՀԿԿՈւ անձի կարգավիճակը:

բ) Ծնողն իր երեխայի ՀԿԿՈւ աշակերտի կարգավիճակը չեղարկելու պահանջով կարող է դիմել անհատական ուսումնական պլանի թիմին: Անհատական ուսումնական պլանի թիմը պետք է ժողով հրավիրի, քննարկի հարցը և անհրաժեշտության դեպքում չեղարկի աշակերտի ՀԿԿՈւ անձի կարգավիճակը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

գ) Ծնողն իր երեխայի ՀԿԿՈւ անձի կարգավիճակը չեղարկելու համար գրավոր պահանջով կարող է դիմել Վրաստանի կրթության և գիտության նախարարությանը, որի հիման վրա նախարարությունը աշակերտների բազայից կհանի այդ կոնկրետ աշակերտի ՀԿԿՈւ անձի կարգավիճակի նշագիծը:

դ) Ծնողն իր երեխայի ՀԿԿՈւ անձի կարգավիճակը չեղարկելու համար կարող է գրավոր դիմել դպրոցի տնօրինությանը: Տնօրինության դիմումի հիման վրա հոգեկրթական գնահատման և խորհրդատվություններ տրամադրող մասնագետը աշակերտի գնահատման արդյունքների համաձայն կորոշի կարգավիճակը չեղարկելու անհրաժեշտությունը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 33**

Ուսուցիչն ունի ՀԿԿՈւ աշակերտի առարկայական անհատական նպատակներին հասնելու մշտադիտարկում իրականացնելու ցանկություն:

Թվարկվածներից ո՞ր գործողությունը/գործողությունները կօգնեն ուսուցչին ՀԿԿՈւ աշակերտի առարկայական անհատական նպատակներին հասնելու մշտադիտարկումն իրականացնելիս:

I. Ուսուցիչը չափորոշչով սահմանված հասկացությունների հետ կապված պետք է գնահատի և մանրամասն նկարագրի, թե ինչ գիտելիքներ է ձեռք բերել աշակերտն ուսումնական յուրաքանչյուր ակադեմիական կիսամյակի ավարտին:
II. Ուսուցիչը ստանդարտացված թեստերի միջոցով պետք է որոշի, թե ինչ առաջընթաց ունի աշակերտը տարեվերջին՝ այս կամ այն ակադեմիական ունակության զարգացման տեսանկյունից:
III. Ուսուցիչը Կուրիկուլումի վրա հիմնված թեստավորմամբ պետք է որոշի, թե ինչ առաջընթաց ունի աշակերտն իր առարկայից՝ Ազգային ուսումնական պլանի նվազագույն շեմը հաղթահարելու տեսանկյունից:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 34**

Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտի կողքին նստում է անձնական օգնական, որին առարկան դասավանդող ուսուցիչը հաճախ հանդիմանում է, քանի որ նա չի օգնում ՀԿԿՈւ աշակերտին որոշ ակտիվություններ կատարելիս:

Առարկան դասավանդող ուսուցչի վարվելակերպը՝

ա) **Ճիշտ է,** քանի որ օգնականը պարտավոր է մշտապես լինել ՀԿԿՈւ աշակերտի կողքին և օգնել նրան բոլոր ակտիվությունները կատարելիս:

բ) **Ճիշտ չէ,** քանի որ օգնականն աշակերտին պետք է ընձեռի հնարավորություն ինքնուրույն կատարելու այն ակտիվությունները, որոնք նա կարող է կատարել:

գ) **Ճիշտ է,** քանի որ եթե աշակերտն ունի օգնականի կարիք, ապա դա ինքնաբերաբար նշանակում է, որ նա ունի օգնության կարիք բոլոր ակտիվությունները կատարելիս:

դ) **Ճիշտ չէ,** քանի որ եթե օգնականն աշակերտի հետ չընդգրկվի բոլոր ակտիվությունները կատարելու գործում, ապա աշակերտը կփորձի գլուխ պահել առաջադրանքը կատարելուց:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 35**

* Առաջադրանքի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Բնության դասին ուսուցիչը նպատակ է դրել նոր՝ «Բնակության միջավայր» թեման աշակերտներին բացատրել պահպանելով համընդհանուր դիզայնի սկզբունքները:

Ուսուցչի կիրառած ո՞ր ուսումնական ակտիվությունն է **ամենից շատ** համապատասխանում համընդհանուր դիզայնի սկզբունքներին:

ա) Ուսուցիչն աշակերտներին նոր թեմա է բացատրում, բերում է կոնկրետ օրինակներ տարբեր կենդանիների կենսակերպի և նրանց բնակության միջավայրի մասին: Դասի ավարտին բացատրված նյութի հետ կապված հարցեր է հղում և գովում աշակերտներին ճիշտ պատասխանելու համար: Վերջում հարցնում է՝ դուր եկավ թե ոչ նրանց դասը:

բ) Ուսուցիչը խնդրում է աշակերտներին կարդալ քննարկվող հարցին վերաբերող տեքստը: ՀԿԿՈւ աշակերտին տալիս է հեշտացված տեքստ և գովում լավ կարդալու համար՝ կարդալու ընթացքում բացատրելով նրան առանձին մանրամասները: Դասի ավարտին նա ամփոփում է հարցը և առանձնացնում հիմնական եզրակացությունները:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

գ) Ուսուցիչն աշակերտներին տալիս է խմբային առաջադրանք. Բաժանում է նրանց կենդանիների թվարկացանկ և խնդրում գրել նրանցից յուրաքանչյուրի բնակության միջավայրի նկարագրությունը՝ հիմնավորելով, թե ինչու են բնակվում այդ վայրում: Յուրաքանչյուր խմբի աշակերտներից մեկն ընթերցում է կատարած աշխատանքը և ուսուցիչը պարգևատրում է նրանցից լավագույնին:

ￚ) Ուսուցիչն աշակերտներին ցույց է տալիս կենդանիների և նրանց բնակության միջավայրի մասին տեսագրություններ: Խնդրում է ստեղծել բնակության միջավայրի մոդել, ընտրել ռեսուրս և աշխատանքը ներկայացնելու ձև: Աշխատելու ընթացքում բոլորին օգնում է՝ ըստ անհրաժեշտության: Վերջում ուսուցիչը նշում է յուրաքանչյուր աշխատանքի ուժեղ կողմը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 36**

Թվարկվածներից համադասարանցիների ո՞ր գործողությունը/գործողությունները կօգնեն լսողության խանգարում ունեցող ՀԿԿՈւ աշակերտին իրենց հետ հաղորդակցվելիս:

I. Համադասարանցիները ՀԿԿՈւ աշակերտի համար հաճախ կրկնում են այն նախադասություններն ու հրահանգները, որոնց բովանդակությունը չի հասկացել աշակերտը:

II. Համադասարանցիները ՀԿԿՈւ աշակերտի հետ զրուցում են հերթափոխությամբ և տալիս են նրան իրենց տեսնելու հնարավորություն:

III. Համադասարանցիները ՀԿԿՈւ աշակերտի հետ շփվելիս օգտագործում են նրա հետ նախապես համաձայնեցված տեսողական նշաններ:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

## Հրահանգ

Բաց առաջադրանքը պահանջում է տրված հարցի վերաբերյալ փաստարկված դատողություն: Ուշադիր կարդացեք առաջադրանքի պայմանը և հարցը: Հաշվի առեք, որ ձեր պատասխանը պետք է լինի կոնկրետ և համապատասխանի հարցին:

Պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով հատուկ հատկացված տեղում գրեք ձեր պատասխանը՝ դուրս չգալով առաջադրանքի համար հատկացված տարածքից:

*Յուրաքանչյուր բաց առաջադրանքի երկայնքով նշված է առավելագույն միավորը:*

*Հաշվի առեք՝ բաց առաջադրանքի պատասխանի մեջ խտրական տերմին գործածելու դեպքում կկորցնեք մեկ միավոր:*

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 37**

*Առավելագույն միավոր՝ 3*

ՀԿԿՈւ աշակերտի համար նախանշված նպատակը ծառայում է նրա կողմից որոշակի գիտելիքների կամ ունակությունների ձեռք բերմանը, պատշաճ վարքի կամ վերաբերմունքի ձևավորմանը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ նպատակը լինի ճիշտ ձևակերպված, ինչը հնարավոր է այսպես կոչված SMART չափանիշների նախատեսմամբ:

- Նկարագրե՛ք SMART չափանիշների նախատեսմամբ ձևակերպված նպատակի առանձնահատկություններից մեկը:
- Հիմնավորե՛ք, թե նպատակը ձևակերպելիս ինչու է անհրաժեշտ նախատեսել ձեր նկարագրած առանձնահատկությունը:

***Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:**

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 38**

*Առավելագույն միավոր՝ 3*

Լեզվի և խոսքի զարգացման խանգարումների մասին արտահայտած պնդումների մեծամասնությունն առասպել է, ինչը բարդացնում է այս խնդրի լուծման համար ճիշտ ռազմավարություններ ընտրելու գործը:

Ստորև ներկայացնում ենք լեզվի և խոսքի զարգացման խանգարումների մասին արտահայտված պնդումները.

1. Երեխայի լեզվի և խոսքի զարգացման խանգարումների կարող է հանգեցնել երկլեզու միջավայրը:
2. Երեխան կարող է ունենալ առավելապես էքսպրեսիվ խոսքի զարգացման խանգարումներ և չունենալ ռեցեպտիվ խոսքի զարգացման բարդություններ:

- Թվարկվածներից ընտրե՛ք իրականությունն արտահայտող պնդումը և նկարագրեք այն ռազմավարությունը, որը կօգնի լուծել այդ պնդման մեջ փոխանցված խնդիրը:
- Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

***Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով***

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 39**

*Առավելագույն միավոր՝ 3*

Գրելու հմտության ուսանում-ուսուցումը որոշակի ժամանակ և վարժեցում է պահանջում: Տարրական դասարանների աշակերտները, հատկապես հատուկ կրթական կարիքներ ունեցողները մեծ դժվարությունների են բախվում նախքան գրելու մեջ վարժվելը: Գրելու հմտությանը տիրապետելու համար անհրաժեշտ է հատուկ ծրագրել ուսուցման գործընթացը, ինչի համար պարտադիր է, որ հատուկ ուսուցիչն իմանա, թե կոնկրետ որ ունակությունների զարգացման վրա է աշխատելու, որպեսզի կրթական հատուկ կարիքներ ունեցող (ՀԿԿՈւ) աշակերտը լավագույնս տիրապետի գրելու հմտությանը:

- Նկարագրե՛ք գրելու հմտությանը տիրապետելու մեկ արդյունավետ ռազմավարություն:
- Բացատրե՛ք, թե կոնկրետ որ ունակության զարգացման վրա է հիմնված ձեր ընտրած ռազմավարությունը և ինչպես կօգնի այն աշակերտին գրելուն տիրապետելու հարցում:

**** Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:***

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

**Առաջադրանք 40**

* Առաջադրանքի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

*Առավելագույն միավոր՝ 3*

*Արվեստի դասին աշակերտներից պահանջվում է ուսումնասիրել գեղանկարչության տարբեր հոսանքները, հավաքել տեղեկություններ նկարիչների մասին և համեմատել արվեստի գործերը: Աշակերտներից պահանջվում է պատրաստել գրավոր աշխատանք, որտեղ նրանք դատողություններ կանեն իրենց ընտրած նկարչի ստեղծագործությունների շուրջ: Չնայած ուսուցչի կողմից կիրառված ուսուցման տարբերվող ռազմավարությունների, ՀԿԿՈւ աշակերտին չի հաջողվում յուրացնել Արվեստ առարկայից Ազգային ուսումնական պլանով սահմանված նյութը: Նա չի կարողանում գրավոր ձևակերպել միտքը:*

Ուսուցիչը սահմանել  է ՀԿԿՈւ աշակերտի առաջադիմության առկա մակարդակը և որոշել է նրա համար մոդիֆիկացնել Ազգային ուսումնական պլանը:

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a

| **Բաղադրիչ** | **Մնում է անփոփոխ** | **Փոփոխվում է** |
| --- | --- | --- |
| Թեմա | | |
| Ուսումնասիրվող հարց | | |
| Հասկացություն | | |
| Շնորհանդեսի ձև | | |
| Ռեսուրս | | |
| Արդյունք | | |

- Տրված աղյուսակից ընտրեք երկու բաղադրիչ, որոնք պետք է փոփոխի ուսուցիչն աշակերտի համար Ազգային ուսումնական պլանը մոդիֆիկացնելու նպատակով:
- Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

***Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:***

1 2 3 4 5 6 6a 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 17a 18 18a 19 20
21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 32a 33 34 35 35a 36 37 38 39 40 40a